յերկրային և մարզային Խորհուրդների նստաշրջանները
հրավիրվում են նրանց Գործադիր կոմիտեների կող-
մից տարեկան առնվազն չորս անգամ:

ՀՈԴՎԱԾ 85. Աշխատավորների պատգամավորների
ռայոնական Խորհուրդների և վարչական շրջանների
աշխատավորների պատգամավորների Խորհուրդների
նստաշրջանները հրավիրվում են նրանց գործադիր
կոմիտեների կողմից տարեկան առնվազն վեց ան-
գամ:

ՀՈԴՎԱԾ 86. Աշխատավորների պատգամավորների
քաղաքային և գյուղական Խորհուրդների նստաշրջան-
ները հրավիրվում են նրանց գործադիր մարմինների
կողմից ամսվա մեջ առնվազն մի անգամ:

ՀՈԴՎԱԾ 87. Աշխատավորների պատգամավորների
յերկրային, մարզային Խորհուրդները, ազգային և վար-
չական շրջանների աշխատավորների պատգամավոր-
ների Խորհուրդները, աշխատավորների պատգամավոր-
ների ռայոնական և քաղաքային Խորհուրդներն
իրենց նստաշրջանների ժամանակ ընտրում են նա-
խագահ և քարտուղար՝ նստաշրջանի նիստերը վարե-
լու համար:

ՀՈԴՎԱԾ 88. Գյուղական խորհրդի նախագահը
հրավիրում ե գյուղական Խորհուրդ և վարում ե նրա
նիստերը:

ՀՈԴՎԱԾ 89. Աշխատավորների ողատգամավորների
Խորհուրդների գործադիր մարսիններն անմիջակա-
նորեն հաջիետու յեն թե՛ նրանց ընտրող աշխատա-
վորների պատգամավորների Խորհրդին, և թե՛ աշխա-
տավորների պատգամավորների վերադաս Խորհրդի
գործադիր մարմինն:

ՀՈԴՎԱԾ 90. Աշխատավորների պատգամավորների
Խորհուրդների վերադաս գործադիր կոմիտեներն իրա-
վունք ունեն վերացնելու ստորադաս գործադիր կոմի-
տեների վորոշումներն ու կարգադրությունները և
դադարեցնելու աշխատավորների պատգամավորների
ստորադաս Խորհուրդների վորոշումներն ու կարգա-
դրությունները:

ՀՈԴՎԱԾ 91. Աշխատավորների պատգամավորների
վերադաս Խորհուրդներն իրավունք ունեն վերացնելու
աշխատավորների պատգամավորների ստորադաս Խոր-
հուրդների և նրանց գործադիր կոմիտեների վորո-
շումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 92. Աշխատավորների պատգամավորների
յերկրային (մարզային) Խորհուրդները կազմում են
գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

հողային,
ֆինանսական,
ներքին առևտուրի,
առողջապահության,
ժողովրդական կրթության,
տեղական արդյունաբերության,
կոմունալ անտեսության,
սոցիալական ապահովության,

ճանապարհային,
 ընդհանուր,
 արվեստի գործերի,
 պլանային հանձնաժողով,
 գործկոմի նախագահին կից կագրերի սեկտոր
 և բացի գրանից, յերկրամասի (մարզի) տնտեսու-
 թյան, առանձնահատկություններին համապատասխան,
 թեթև արդյունաբերության, Սննդային արդյունաբե-
 րության, Անտառային արդյունաբերության, Հացա-
 հատիկային և անասնապահական սովորողների միու-
 թենական-հանրապետական ժողովրդական Կոմիսա-
 րիատների հաստատմամբ, աշխատավորների պատգա-
 մավորների յերկրային (մարզային) Խորհուրդները
 կազմում են բաժիններ կամ վարչություններ
 թեթև արդյունաբերության,
 սննդային արդյունաբերության,
 անտառային արդյունաբերության,
 հացահատիկային և անասնապահական սովորո-
 ղների:

ՀՈԴՎԱԾ 93. Յերկրամասի (մարզի) պայմաններին
 համապատասխան, ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ որենքների հիման
 վրա, ընդհանուր միութենական ժողովրդական Կոմի-
 սարիատները և Ներքին գործերի ժողովրդական Կոմի-
 սարիատն աշխատավորների պատգամավորների յերկ-
 րային (մարզային) Խորհուրդներին կից կազմում են
 իրենց վարչությունները:

Մթերությունների կոմիտեն աշխատավորների պատ-
 գամավորների յերկրային (մարզային) Խորհուրդներին
 կից նշանակում ե իր լիազորները:

ՀՈԴՎԱԾ 94. Աշխատավորների պատգամավորների
 յերկրային (մարզային) Խորհուրդների բաժինները և
 վարչություններն իրենց գործունեյության համար յեն-

թարկվում են թե աշխատավորների պատգամավորների
 համապատասխան յերկրային (մարզային) Խորհրդին
 ու նրա Գործադիր կոմիտեյին և թե ՌԽՖՍՀ համա-
 պատասխան Ժողովրդական կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 95. Վարչական շրջանների աշխատավոր-
 ների պատգամավորների Խորհուրդները և նրանց
 գործադիր կոմիտեները կազմում են բաժիններ և
 իրենց աշխատանքը տանում են ՌԽՖՍՀ գերագույն
 մարմինների որենքների ու հրամանագրերի և աշխա-
 տավորների պատգամավորների յերկրային (մարզա-
 յին) Խորհուրդների գործությունների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 96. Աշխատավորների պատգամավորնե-
 րի ու այլական Խորհուրդները կազմում են գործադիր
 կոմիտեների հետևյալ բաժինները:

հողային,
 ժողովրդական կրթության,
 ֆինանսական,
 ներքին առևտուրի,
 առողջապահության,
 սոցիալական ապահովության,
 ընդհանուր,
 ճանապահային,
 պլանային հանձնաժողով,
 գործկոմի նախագահին կից կագրերի սեկտոր
 և, բացի դրանից, ույյոնի տնտեսության առանձնա-
 հատկությունների համապատասխան, աշխատավոր-
 ների պատգամավորների յերկրային (մարզային)
 Խորհրդի հաստատմամբ, աշխատավորների պատգամա-
 վորների ու այլական Խորհուրդները կազմում են կո-
 մունալ և տեղական արդյունաբերության բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 97. Ռայոնի պայմաններին համապատա-
 սխան, ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ որենքների հիման վրա, աշ-

Խատավորների պատգամավորների համապատասխան յերկրային (մարզային) Խորհրդի հաստատմամբ՝ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը, աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհրդին կից, կազմում ե իր վարչությունները:

ՀՈԴՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների բաժիններն իրենց գործունեյության համար յենթարկվում են թե աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհրդին ու նրա գործադիր կոմիտեյին և թե աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) Խորհրդի համապատասխան բաժնին:

ՀՈԴՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների բաղաքային խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետեւյալ բաժինները.

Փինանսական,

կոմունալ տնտեսության,

ներքին առևտուրի,

առողջապահության,

ժողովրդական կոթության,

սոցիալական ապահովության,

ընդհանուր,

պլանային հանձնաժողով,

գործկոմի նախագահին կից կադրերի սեկտոր,

և, բացի դրանից, քաղաքային արդյունաբերության, նրա քաղաքային և քաղաքամերձ տնտեսության առանձնահատկություններին համապատասխանողեն՝ տեղական արդյունաբերության, հողային բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 100. Աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեյության համար յենթարկվում են ինչպես

աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեյին, այնպես ել աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհրդի համապատասխան բաժնին, կամ անմիջապես աշխատավորների պատգամավորների յերկրային (մարզային) Խորհրդի համապատասխան բաժնին:

ՀՈԴՎԱԾ 101. Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեյության համար յենթարկվում են ինչպես Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորների պատգամավորների Խորհրդին և նրա գործադիր կոմիտեյին, այնպես ել անմիջապես ՌԽՖՍՀ համապատասխան Ժողովրդական կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 102. Աղքային շրջանների աշխատավորների պատգամավորների Խորհուրդները և նրանց գործադադիր կոմիտեները շրջանի տերիտորիալում իրականացները, փորոնք դրված են նրանց վրա «Ազգային շրջանների որինադրությամբ», ինչպես նաև աշխատավորների պատգամավորների համապատասխան յերկրային (մարզային) Խորհրդի փորոշումներով:

«Ազգային շրջանների որինադրությունը» սահմանում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը:

ԳՐՈՒԹ IX.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՈԴՎԱԾ 103. ՌԽՖՍՀ պետական բյուջեն կազմվում ե ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի կողմից և նրա ձեռքով ներկայացվում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի հաստատմանը:

ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հաստատված
ՌԽՖՍՀ պետական բյուջեն հրապարակվում ե ի գի-
տություն ընդհանուրի:

ՀՈԴՎԱԾ 104. ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդն
ընտրում ե բյուջետային հանձնաժողով, վորը Գերա-
գույն Խորհրդին զեկուցում ե իր յեզրակացությունը
ՌԽՖՍՀ պետական բյուջեյի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 105. ՌԽՖՍՀ պետական բյուջեյի կա-
տարման մասին հաշվետվությունը հաստատում ե
ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդը և հրապարակում ե ի
գիտություն ընդհանուրի:

ՀՈԴՎԱԾ 106. Ավտոնոմ հանրապետությունների
բյուջեներում և տեղական յերկրային (մարզային)
բյուջեներում, ինչպես նաև ավտոնոմ մարզերի, ազ-
գային և վարչական շրջանների, ռայոննական, քաղա-
քային և գյուղական խորհուրդների բյուջեներում
մտցվում են տեղական տնտեսությունից ստացված
յեկամուտները, նրանց տերիտորիայում ստացված
պետական յեկամուտներից տրվելիք հատկացումներն,
ինչպես նաև տեղական, հարկերի մուտքելն այն չա-
փերով, վորոնք սահմանվում են ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ
որենսդրությամբ:

ԳԼՈՒԽ X.

ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍԴՎԱԾ 107. Արդարադատությունը ՌԽՖՍՀ-ում
իրագործվում ե ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի,
ավտոնոմ հանրապետությունների Գերագույն դատա-
րանների, յերկրային ու մարզային դատարանների,
ավտոնոմ մարզերի դատարանների, ազգային շրջան-

ների դատարանների, վարչական շրջանների դատա-
րանների, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վորոշմամբ
ստեղծվող ԽՍՀՄ հատուկ դատարանների, ժողովր-
դական դատադանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 108. Բոլոր դատարաններում գործերի
քննարկումն իրագործվում ե ժողովրդական ատենա-
կալների մասնակցությամբ, բացի այն դեպքերից,
որոնք հատկապես նախատեսված են որենքով:

ՀՈԴՎԱԾ 109. ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանը
հանդիսանում է ՌԽՖՍՀ բարձրագույն դատական
մարմինը: ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի վրայ յե-
ղրվում ՌԽՖՍՀ և ավտոնոմ հանրապետությունների
ու մարզերի բարձր դատական մարմինների դատական
գործունելու թյան հսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 110. ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանը
ընտրվում է ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կողմից 5
տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 111. Ավտոնոմ հանրապետությունների
Գերագույն դատարաններն ընտրվում են Ավտոնոմ
հանրապետությունների Գերագույն Խորհուրդների
կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 112. Յերկրամասային և մարզային դա-
տարանները, ավտոնոմ մարզերի դատարանները, ազգա-
յին և վարչական շրջանների դատարաններն ընտրվում
են աշխատավորների պատգամավորների յերկրամա-
սային, մարզային Խորհուրդների կամ ավտոնոմ մար-
զերի աշխատավորների Խորհուրդների կամ ազգային
դերի աշխատավորների աշխատավորների պատգամա-
վարչական շրջանների աշխատավորների պատգամա-
վորների Խորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 113. Ժողովրդական դատարաններն ընտր-
վում են ռայոնի քաղաքացիների կողմից՝ ընդհանուր,
ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման

վրա, գաղտնի քվեարկությամբ, Յ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 114. Դատավարությունը ՌԽՖՍՀ ում կատարվում է ռուսերեն լեզվով կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի կամ ազգային շրջանի լեզվով, այդ լեզվին չտիրապետողների համար ապահովելով լիակատար ծանոթացումը դատավարության նյութերին թարգմանչի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 115. Գործերի քննությունը ՌԽՖՍՀ բոլոր դատարաններում կատարվում է գոնքած, քանի վոր որենքով չեն նախատեսված բացառություններ, մեղադրյալի համար ապահովելով պաշտպանվելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 116. Դատավորներն անկախեն և միայն որենրին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 117. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց յենթակա հիմնարկների, առանձին պաշտոնական անձերի, ինչպես նաև քաղաքացիների կողմից ՌԽՖՍՀ տերիտորիայում որենքները ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն վերահսկողությունն իրագործվում է անմիջականորեն թե ԽՍՀՄ Դատախազի կողմից և թե ՌԽՖՍՀ Դատախազի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 118. ՌԽՖՍՀ Դատախազը նշանակվում է ԽՍՀՄ Դատախազի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 119. Յերեամասարին և մարզային դատախաները, ինչպես նաև ավտոնոմ հանրապետությունների և ավտոնոմ մարզին դատախազները նշանակվում են ԽՍՀՄ դատախազի կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 120. Ազգային և վարչական շրջանների դատախաները, ույսնական և քաղաքային դատախակները նշանակվում են ՌԽՖՍՀ Դատախազի կողմից ԽՍՀՄ Դատախազի հաստատությամբ 5 տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 121. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրագործում են անկախ տեղական վորեւ մարմնից, յենթարկվելով միայն ԽՍՀՄ Դատախազին:

ԳԼՈՒԽ XI.

ԺԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 122. ՌԽՖՍՀ քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, իորինգային հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական ճնաժամերի հնարավորության վերացմամբ և գործազրկության լիկվիդացիայով:

ՀՈԴՎԱԾ 123. ՌԽՖՍՀ քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատանքային որրեկրճատելով, — հասցնելով 7 ժամի, բանվորների և ծառայողների համար տարեկան արձակուրդ սահմանելով, վորի ընթացքում պահպանվում են նրանց

աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար տրամադրելով սանատորիաների, հանգստի տների, ակումբների լայն ցանց:

ՀՈԴՎԱԾ 124. ՈԽՖՍՀ քաղաքացիները ծերության ժամանակ, իմչպես նաև հիվանդության և աշխատունակությանը կորցնելու դեպքում ունեն նյութական ապահովության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների և ծառայողների՝ պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ աշխատավորության տրվելիք բժշկական ձրի ոգնությամբ, աշխատավորների ոգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 125. ՈԽՖՍՀ քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր, պարտադիր տարրական կրթությամբ, կրթության անվճարությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն գպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, գպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, սովորողներում, մեքենատրակտորային կայաններում և կոլխոզներում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական և ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով:

ՀՈԴՎԱԾ 126. ՈԽՖՍՀ ում կնոջը տրվում են տղամարդուն հավասար իրավունքներ՝ տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական քաղաքական ուժությունում:

Կանանց այդ իրավունքների իրագործման հնարավորությունն ապահովվում է նրանով, վոր տղամարդու հետ համահավասար, կնոջը վերապահվում է աշ-

խատանքի, աշխատավարձի, հանգստի, սոցիալական ապահովության և կրթության իրավունք, ապահովվում է սոր և մանկան շահերի պետական պաշտպահությամբ, կնոջը՝ հղիության ժամանակ արձակուրդ որակադրելով՝ աշխատավարձը պահպանելով հանդերձ, ծննդատների, մանկամասունեների և մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈԴՎԱԾ 127. ՈԽՖՍՀ քաղաքացիների իրավակամավարությունը, անկախ նրանց ազգությունից և ցեղից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում հանդիունում է անխախտ որենք:

Քաղաքացիների իրավունքների վորևե ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ, ընդհակառակը, ցեղական և ազգային պատկանելությունից յելնելով ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես և ցեղական ու ազգային բացառիկության, կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակի քարոզ պատժվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 128. Նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների խղճի ազատությունը, ՈԽՖՍՀ ում յեկեղեցին անջատված է պետությունից և դպրոցը՝ յեկեղեցուց: Կրօնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրօնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում են բոլոր քաղաքացիների համար:

ՀՈԴՎԱԾ 129. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական իրավակարգն ամրացնելու նպատակով, ՈԽՖՍՀ քաղաքացիների համար որենքով ապահովվում է:

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների ու միտինգների ազատություն,

գ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատություն:

Քաքաքացիների այդ իրավունքներն ապահովում են աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և նյութական այլ պայմաններ, վորոնք անհրաժեշտ են դրանց իրագործման համար:

ՀՈԴՎԱԾ 130. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաները՝ կազմակերպական ինքնագործունեյությունը և քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ՌԽՖՍՀ քաղաքացիների համար ապահովում ե հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունք—արհեստակցական միություններ, կոոպերատիվ միավորումներ, յերիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ, իսկ բանվոր դասակարգի շորքերից և աշխատավորների մրուկ խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են համամիտութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորը հանդիսանում է աշխատավորների առաջավոր ջոկատը՝ սոցիալիստական կարգերն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում, և վորն իրենից ներկայացնում է աշխատավորների բոլոր՝ ինչպես հասարակական, այնպես ել պետական կազմակերպությունների ղեկավար կորիզը:

ՀՈԴՎԱԾ 131. ՌԽՖՍՀ քաղաքացիների համար ապահովում ե անձի անձեռնմխելիություն: Վոչ-վոչ

չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի անկցիայով:

ՀՈԴՎԱԾ 132. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակագրության գաղտնապահությունը պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 133. ՌԽՖՍՀ ապաստանի իրավունք ե վերապահում ոտարերկրյա քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու կամ զիտական գործունեյության կամ ազգային-ազատագրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 134. ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր ե պահպանել Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատավորների կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել հասարակական պարտականությանը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 135. ՌԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր ե պահպանել ու ամրացնել հանրական, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազն ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հալուսության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունեվոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության վրա ձեռք բարձրացնող անձեռը ժողովրդի թշնամիներն են հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 136. Բնդիսանուր զինվորական պարտականությունը հանդիսանում է որենք:

Զինվորական ծառայությունը բանվորա-Գյուղական կարմիր բանակում ՌԽՖՍՀ քաղաքացիների պատվավոր պարտականությունն եւ:

ՀՈԴՎԱԾ 137. Հայրենիքի պաշտպանությունը
ՈԽՖՍՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտ-
քըն եւ Հայրենիքին դավաճանելը՝ յերդումը խախտե-
լը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական
հզորությանը մնաս հասցնելը, լրտեսությունը—պատժ-
գում են որենքի ամենայն խստությամբ, վորպես ա-
մենածանր չարագործություն։

ԳԼՈՒԽ XII.

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՒՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 138. Պատգամավորների ընտրություն-
ներն աշխատավորների պատգամավորների բոլոր
խորհուրդների մեջ—ՈԽՖՍՀ Գերագույն Խորհուրդ,
աշխատավորների պատգամավորների յերկրային և
մարզային Խորհուրդներ, ավտոնոմ հանրապետու-
թյունների Գերագույն Խորհուրդներ, ավտոնոմ մար-
զերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդ:
ներ, ազգային և վարչական շրջանների աշխատավոր-
ների պատգամավորների Խորհուրդներ, ռայոնական,
քաղաքային և գյուղական (ստանիցայի, գյուղակի,
խուռարի, առուի) աշխատավորների պատգամավոր-
ների Խորհուրդներ,—ընտրողների կողմից կատար-
վում են ընդհանուր, հափառուր և ուղղակի ընտրա-
կան իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկու-
թյամբ։

ՀՈԴՎԱԾ 139. Պատգամավորների ընտրություն-
ներն ընդհանուր են—ՈԽՖՍՀ բոլոր քաղաքացիները,
վորոնք հասել են 18 տարեկանի, անկախ ցեղական ու-
ազգային պատկանելիությունից, դավանաբից, կը-
թական ցենզից, նստակեցությունից, սոցիալական

ծագումից, գույքալին գրությունից և անցյալ գոր-
ծունելությունից, իրավունք ունեն մասնակցելու պատ-
գամավորների ընտրություններին և ընտրվելու՝ բացի-
խելազարներից և այն անձերից, վորոնք դատարանի-
կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունք-
ների գրկումով։

ՀՈԴՎԱԾ 140. Պատգամավորների ընտրություն-
ները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի-
ունի մի ձայն, բոլոր քաղաքացիները մասնակ-
ցում են ընտրություններին հավասար հիմունքնե-
րով։

ՀՈԴՎԱԾ 141. Կանայք ընտրելու և ընտրվելու
իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ համահա-
վասար։

ՀՈԴՎԱԾ 142. Կարմիր բանակի շարքերում գտնվ-
ող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավուն-
քից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ համա-
հավասար։

ՀՈԴՎԱԾ 143. Պատգամավորների ընտրություն-
ները լինում են ուղղակի. աշխատավորների պատգա-
մավորների ընտրությունները բոլոր Խորհուրդներում,
սկսած աշխատավորների պատգամավորների գյուղա-
կան և քաղաքային Խորհրդից մինչև ՈԽՖՍՀ
կան և քաղաքային Խորհրդից կողմից կա-
գերագույն Խորհուրդը, քաղաքացիների կողմից կա-
տարգում են անմիջականորեն, ուղղակի ընտրություն-
ների միջոցով։

ՀՈԴՎԱԾ 144. Պատգամավորների ընտրության
ժամանակ քվեարկությունը կատարվում ե գաղտնի։

ՀՈԴՎԱԾ 145. ՈԽՖՍՀ աշխատավորների պատ-
գամավորների Խորհուրդների ընտրությունները կա-
տարգում են ըստ ընտրական շրջանների՝ հետևյալ
նորմաներով՝

յերկրամասալին (մարզային) Խորհրդում, նայած յերկրամասի կոմ մարզի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 15 հազար և վոչ ավելի, քան 40 հազար բնակչից,

ավտոնոմ մարզի մարզային Խորհրդում, նայած ավտոնոմ մարզի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 1500 և վոչ ավելի, քան 2000 բնակչից,

ազգային շրջանի Խորհրդում, նայած ազգային շրջանի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 500 բնակչից,

վարչական շրջանի Խորհրդում, նայած վարչական շրջանի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 2000 և վոչ ավելի, քան 10.000 բնակչից,

ռայոնական Խորհրդում, նայած ռայոնի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 500 և վոչ ավելի, քան 1500 բնակչից,

քաղաքային Խորհրդում և քաղաքների ռայոնական Խորհրդում, նայած քաղաքի կամ քաղաքային ռայոնի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 1000 բնակչից,

Մոսկվայի և Լենինգրադի Խորհրդներում՝ մի պատգամավոր 3000 բնակչից,

գյուղական Խորհրդում, նայած գյուղական Խորհրդի գործունեյության ռայոնի մեծության, մի պատգամավոր՝ վոչ պակաս, քան 100 և վոչ ավելի, քան 250 բնակչից:

Աշխատավորների պատգամավորների յուրաքանչյուր յերկրամասային (մարզային) Խորհրդի, ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, ազգային և վարչական շրջանի աշխատավորների պատգամավորների պատգամավորների Խորհրդի, աշխատավորների

գամավորների ռայոնական և քաղաքային Խորհրդի համար ընտրական նորմաները սահմանվում են «ԾննծԱՀ աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընարությունների որինադրությամբ» այն ընտրական նորմաների սահմաններում, վորոնք մատնանշված են այս հոդվածում:

Աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհրդների համար ընտրական նորմաները սահմանվում են աշխատավորների պատգամավորների յերկրամասային (մարզային) Խորհրդների, ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհրդների և ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհրդների կողմից այն ընտրական նորմաների սահմաններում, վորոնք մատնանշված են այս հոդվածում:

ՀՈԴՎԱԾ 146. Ըստրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքը վերապահվում է հասարակական կազմակերպություններին և աշխատավորների ընկերություններին՝ կույնիստական կուսակցական կազմակերպություններին, արհետակցական միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդության կազմակերպություններին, կուլտուրական ընկերություններին:

ՀՈԴՎԱԾ 147. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր և հաշվետվություն տալու ընտրուների առաջիր աշխատանքի և աշխատավորների պատգամավորների Խորհրդի կատարած աշխատանքի մասին և ամեն ժամանակ կարող են հետ կանչվել ընտրուների մեծամասնության վորոշմամբ՝ որենքով սահմանված կարգով:

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱԲԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 148. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական գերըշ բաղկացած ե վոսկե մանգաղի և մուրճի նկարից, վորոնք զետեղված են խաչաձև, կոթերը դեպի վար, արևի ձառագայթների մեջ կարմիր ֆոնի վրա և հասկերի շրջանակում «ՌիժՄԱՀ» և «Պրոեատրներ բոլոր յերկըների, միացեք» մակագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 149. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական դրոշակը կազմված է կարմիր քաթանից, վորի ձախ անկյունում, դեպի վեր գտնված ձողիկի մոտ զետեղված են «ՌիժՄԱՀ» տառերը:

ՀՈԴՎԱԾ 150. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքն ե Մոսկվա քաղաքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 151. ՌիժՄԱՀ Սահմանադրության փոփոխումը կատարվում է սիայն ՌիժՄԱՀ Գերագույն Խորհրդի վորոշմամբ, վորն ընդունվում է Գերագույն Խորհրդի ձայների առնվազն յերկու յերբորդի մեծամասնությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհուրդների Համառուսական Արտակարդ 17-րդ համագումարի գործում՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմական Որենքը) հաստատելու մասին

Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմական Որենքը)

Դրույ	I. Հասարակական կառուցվածքը	5
Դրույ	II. Գետական կառուցվածքը	8
Դրույ	III. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինները	12
Դրույ	IV. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության պետական կառավարման մարմինները	16
Դրույ	V. Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները	21
Դրույ	VI. Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական կառավարման մարմինները	23
Դրույ	VII. Ավտոնոմ մարզերի պետական իշխանության մարմինները	25
Դրույ	VIII. Գետական իշխանության տեղական մարմինները	26
Դրույ	IX. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության բյուջենը	33
Դրույ	X. Դատարաններ և դասախազությունը	34
Դրույ	XI. Քաղաքացիների հիմական իրավունքներն ու պարտականությունները	37
Դրույ	XII. Ընտրական սիստեմը	42
Դրույ	XIII. Գերբը, զրուակը, մայրաքաղաքը	46
Դրույ	XIV. Սահմանադրությունը փափոխիլու կարգը	46



Ответственный по выпуску Э.М. Гигоян
Тех. редактор: Д. М. Джинибалаян

Уполномочен № О — 469. Сдано в набор 21 февраля 1937 г.
Подписано в печать 22 марта 1937 г. Оп. № 3 п. л. Тираж 20.000
Заказ № 367.

Типография Краевого Армянского Издательства „ГРО“
Ростов—Дон, Ворошиловский пр., № 27.

«Ազգային գրադարան



NL0194157

ЧИСЛО 35 ЧИСЛО
Цена 35 коп.

34796

На армянском языке

КОНСТИТУЦИЯ
(ОСНОВНОЙ ЗАКОН)
РОССИЙСКОЙ СОВЕТСКОЙ ФЕДЕРАТИВНОЙ
СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“
Ростов н-Д, Ворошиловский пр. № 27